

Հասք 5 Ղրու

Հասք 5 Ղրու

Արսուսէր
եւ Պաս. Տնորէն՝
Բ Ի Թ Ը Բ
Գ Ո Ի Յ Ո Ի Մ Ճ Ե Ա Ն

Խմբագիր՝
ԶԱԻԷՆ ՅԱԲԷԹԵԱՆ

Հասցէ՝
Greek P. O. Box 54

Բաժանորդագր.
Իզմիր
Տարեկ. Վեցամս.
100 60 դր.
Գաւառ
Կ. Պոլիս
120 75 "



Պ Ա Տ Ր Ա Ս

ԿԻՍԱՄՍԵԱՅ ՕՐԿԱՆ ՀԱՅ ՊՕՅ-ՍԿԱՈՒՏՆԵՐՈՒ ԻԶՄԻՐ

BADRASD
Organe des Boy-Scouts Arméniens
de SMYRNE

ΜΗΑΔΡΑΣΤ
ΟΡΓΑΝΟΝ ΤΩΝ ΑΡΜΕΝΙΩΝ ΠΡΟΣΚΟΠΩΝ
ΣΜΥΡΝΗΣ

Բաժանորդական խնդիրներու համար դիմել՝
ՆՈՒՊԱՐ ԲԱՐՈՒՆԱԿԵԱՆԻ Librairie «Ararat»
17, Rue Imam, Rechidié - Smyrne

Directeur
et Ger. Resp.
PETER
GOUYOUMDJIAN

Redacteur
ZAVEN HAPETIAN

Adresse
Greek P. O. Box 54

Բաժանորդագր.
Արսասանանի
Եւրոպայ
Տարեկ. Վեցամս.
10 6 դր
Ամերիկայ
1 sojour 60 սկեթ



Եզիպտոսի Հայ եւ Անգլիացի սկաուտներէն, կորիւններն ու աղջիկ-սկաուտներէն խումբ մը՝ Անգլիայի սկաուտներու կողմէ կազմակերպուած հանդէսէն վերջ.

Des Eclaireurs, guides, Louvetaux Arméniens et Anglais d'Egypte, après une reunion organisée par les Eclaireurs Anglais.



Գարածաշի «Վարդանեան» Միութեան ֆուտբոլի խումբը որ Հայ Ակումբի Մարմնամարզական ձիւղին Գարածաշի Մասնաճիւղն է նոյնպէս.

L'equipe de football du club sportif Armenien «Vartanian» de Caratach.

ՍԿԱՈՒՏՆԵՐ

Բոլոր Աշխարհի,

Համաշխարհային խաղաղութիւնը կարելի՞ է միթէ:

Այո՛, եթէ մարդիկ իրենց փափաքներն ու ձգտումները հիմնեն առողջ գաղափարէն մը վրայ, ու իրենց հաճոյքի գրգիռը զօհեն մարդկային երջանկութեան ի նպաստ:

Աստուածային սէրը կը պահանջէ նաև սէրը դէպի իր յարորդը, ու այսպէս խաղաղութիւնը պիտի հաստատուի:

Սկաուտներ, կեանքը մերն է. ընդարձակենք մեր գործունէութեան շրջանակը. տարածենք սկաուտական գաղափարը այս ժողովրդային խաւերուն մէջ ու շահինք մարդկութեան վստահութիւնը հանդէպ մեզ: Երիտասարդութիւնը մերն է, եւ աննք վաղուայ մարդերը, ապագայ

սերունդներն են: Այս պատճառաւ պատերազմը պէտք է դադրի. Աշխարհ թող զիտնայ թէ խաղաղութիւնը պիտի տիրէ եթէ ամէն բանէ առաջ անկեղծ սիրոյ զգացումը կը տիրէ իր մէջ:

«Սաղաղութիւն եւ Աշխատանք»

Այս է մեր հետապնդած նպատակը ու կուզենք պատրաստել ողջամիտ սերունդ մը, որ սիրէ Աստուածն ու իր յարորդը:

Y. Corbisier

Պեղծիգայի Պոյ-Սկաուտներու
ԸՆԴՀ. ՊԵՏ

Ե Ր Դ Ո Ւ Մ Ը

Ոչ մէկ վաս ու անպասիւ արարիւմ պիտի արասաւորեն մեր ֆաղաքը. երբեք չ'պիտի զինեն մեր ընկերները վրասնգի ժաւանակ:

Պիտի կոռիկի առանձինն կամ ըն-

կերովի, մեր ֆաղաքին իսկաշին ու դարանանսին համար:

Քաղաքին օրեկներուն պիտի հնազանդիկի ու յարգեկի զանոնի, եւ մեր կարեշին պիտի ընեն կարգի բերելու անոնի որ կ'արհամարհեն այդ օրեկները:

Պիտի կոռիկի անդադար ֆաղաքացիական պարսակաւորութեան զաղաքաւոր սարածելու համար:

Այսպէս, ամեն միջոցաւ պիտի ցանակի բողոք ֆաղաքը աւելի մեծ ու աւելի գեղեցիկ՝ քան զսաճ ժաւանակիս:

Ո՞րն է այս երգումը:

Զարբորդ դարուն՝ 18 տարեկան Աթէնացիները այս երգումը կը կատարէին:

Հին օրերու պատանիները արդեօք մեր հեռաւոր նախնիքներն են:

Սկաուտ

ՄԱՍՆԱԿՑԵՑԷՔ, Զ Ո Ւ Ա Ր Թ Ո Ւ Թ Ե Ա Ն ՈՒ Ժ Պ Ի Տ Ի ՄԵՐ ՄՐՑՈՒՍԻՆ

Բ Ա Ն Ա Կ Ո Ւ Մ Ն Ե Ր Ը

ԹԷ ԻՆՉՊԷՍ ԿԱՐԵԼԻ Է ԿԱՏԱՐԵԼ, ՃՇՄԱՐԻՏ ԲԱՆԱԿՈՒՄՆԵՐ

I

Կարգապահութիւնը.— Բանակումի մը մէջ կարգապահութիւնը ամենակարևոր պահանջքն է. վրաններու ասկ, խոհանոցին մէջ և այլուր բացարձակ կարգապահութեամբ մը կարելի է ունենալ տիպար բանակում մը, զորս ձեռք բերելու համար նոյնպէս պէտք է գործադրել աշխատանքի բաժանումի գրութիւնը:

Խմբապետը նախ պարտաւոր է ըզբազրել կարգապահութեամբ. իսկ խմբակի առաջնորդները կը ստանձնեն հետեւեալ պաշտօնները.

1.— Խոհանոց. բանակումի կարգը, բանակախայրի պահպանութիւն, աշխատանք:

Խոհարարը ուտեստեղէնով կ'ըրարի ու պարտաւոր է բռնել ծախքերու ճշգրիտ հաշիւը:

Բանակումի կարգը ստանձնող առաջնորդը կը կազմակերպէ սկաուտներու միջև կանոնաւոր թզթակցութիւնը, հոգ կը տանի վրաններու մաքրութեան և այլն:

Բանակախայրի պահպանութեան համար առաջնորդը կը նշանակէ պահակներ ու կը հնչեցնէ զարթնումը, ճաշը, հանգիստը և այլն:

Աշխատանքի հսկող առաջնորդը պատասխանատու է բանակումէ դուրս գտնուող սկաուտներուն համար, խումբին ի նպաստ տեղեկութիւններ կը քողէ, գնումներ կը կատարէ, շըրջակայքի բնակիչներուն հետ յարաբերութեան կը մտնէ, ղրբենք կ'առաջնորդէ բանակումը եթէ փափաքին և չի.

Մաքրութիւնը բանակումին մէջ անհրաժեշտ պահանջք մըն է. Պէտք է հսկել որպէսզի սկաուտները ազտոտութիւններ չի նետեն վրաններու շուրջ և կամ բանակավայրին ուր մէկ կողմը:

Սնունդ.— Բանակումի մը մէջ պէտք է զգուշանալ շարաշար վատնումէ. այս առթիւ նախընտրելի է ամէն մէկ լսկաուտի օրական սննդեղէնի բաժին յատկացնել. 150 grամ հաց. կիս օխս գետնախնձոր. 50 grամ միս. գաւաթ մը կաթ. չափաւոր պտուղ ու խահուռ:

1.— Թարմ միսը պէտք է տալ երկու օրը անգամ մը:

2.— Գաւաթ մը կաթը՝ առուօտները իսկ խահուռէն՝ ճաշէն վերջ:

3.— Հացի շերտերուն վրայ եթէ կարելի է քիչ մը անուշ կամ կարագ իւղ քսել:

ՎԱԳՐ

Պ Ա Շ Տ Օ Ն Ա Կ Ա Ն

ԲՆԵՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ ՅՈՆԵԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ Հայ Սկաուտներուն

II

Ա. ԿԱՐԳ

1.— 50 մէթր լողալ: Եթէ ասողջական և կամ աշխարհագրական գիրքին պատճառաւ սկաուտները անկարող կ'ըլլան լրացնել այս պայմանը, անոնք պարտաւոր են անցնել հետեւեալ մասնագիտական քննութիւններէն մին կարմիր խաչ. դրօշախօսութիւն, ուղեցոյց, թարգման, մարզիկ:

2.— Դրօշախօսութեամբ պատգամ մը փոխանցել և ընդունել վայրկեանը 20 գրբ:

3.— Երկու հարիւր դահեկան իրր խնայուած դրամ ի պահ ունենալ:

4.— 7 մղոն հեռաւորութիւն ունեցող վայր մը ճամբորդել և վերագաւնալ (1/4 մղոն ընդամէնը), առանձինն և կամ ուրիշ սկաուտի մը ընկերակցութեամբ և գրել ճշգրիտ տեղեկութիւն մը անոր մասին:

5.— Յառաջացեալ նախնական դարձան:

6.— Հեռեւեալ կերակուրներէն երկուքը եփել գիտնալ (ընտրութիւնը քննիչին թողուած է). թոչուն մը փեթիլ և եփել, հաց շագիլ և եփել, Մուսմեզ, բանջարեղէն կերակուր մը, մտեղէն կերակուր մը:

7.— Քարտէս մը պայմանագրական նշաններով միասին կարենալ գծել տեղւոյն վրայ նշանակելով աշխատու շէնքերու, ճամբաներու, երկաթուղիների և այլն ընդունուած նշանները:

8.— Ներկայացնել ձեռական աշխատութեամբ շինուած կարասի մը կամ մետաղեայ առարկայ մը և կամ կարել սկաուտական ամբողջական համազգեստ մը (շապիկ և տափտա):

9.— Գնահատել՝ 20% սխալմունքով, հեռաւորութիւն, տարածութիւն, մեծութիւն, թիւ, բարձրութիւն և ծանրութիւն:

10.— Նորընծայի պահանջներուն համաձայն դաստիարակել նորազիր պատանի մը:

— ՎԵՐՋ —

ՆԱՄԱԿԱՏՈՒԹ

Գ. Բ. — Ձեր «Մարզկուռիները մեր մէջ» վերնագրով յօդուածը չի հրատարակուիր թերթիս ուղղութեան բնորովին հակառակ ըլլալով:

Երիտասարդաց Միութիւն. ՄիՏԻԼԼԻ.— Թերթերը սկսանք զրկել:

ՀԱՅ ՍԿԱՈՒՏԻՉՄԸ

Կ. ՊՈԼՍՈՑ ՄԷՋ

Անցեալ Կիրակի, 2 Ապրիլ, տեղի ունեցաւ Անգլիական բանակին կողմէ կազմակերպուած՝ Անգլիացի կոյր գրնուորներու ինպաստ զաշտահանդէս մը որու մասնակցեցան, բացի Թուրքիէ, մնացեալ բոլոր ազգերու սկաուտները, որոնք տոյանցք մը կատարեցին ի ներկայութեան գնդ. Մաքրուէրի, նախագահ Կ. Պոլսոյ Միջազգային սկաուտական ժողովին:

Իրիկուն, ժամը 7:30ին, Հայ սկաուտները գեղեցիկ անակընկալ մը ըրին, զոր կարելի է կոչել կատարեալ յաղթանակ մը. Հնդկական պար մըն էր ան:

Նախապէս բանակումի կրակը պատրաստուած ըլլալով, հայ սկաուտներու խումբ մը, իրր թէ գերի մը բռնած ըլլար հնդկական բացագանչութիւններով ու ձեւերով կրակին կը մօտենայ այրելու համար յարգով լեցուած արուեստական մարդ մը ու կ'սկսի աւար շուրջ պարել հնդկական «Եղջերուներու պար»ը:

Այս պարը զոր կատարեցին Բերա-Շիշլի մասնաճիւղին 1 խումբին սկաուտները ու իրենց խմբապետը Ա. Տօմինեան, առարկայ կըլու կատարեալ հրացմունքի:

Ա. ՊԵՐՊԵՐԵԱՆ

ՍԿԱՈՒՏԻՉՄԸ ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ՄԷՋ

ՊԵԼՃԻԳԱՅ

Պելճիգայի պայտասներու միութիւնը կազմակերպած է սկաուտական ցուցահանդէս մը որ տեղի պիտի ունենայ Պրիւսիայի մէջ 28 Մայիսէն մինչև 7 Յունիս:

Ս Տ Ա Յ Ա Ն Ք

Առաջնորդ խօսակցութեան Յունարէն լեզուի Առաջնորդ Զրուցատրուժեան, Նամակագրութեան, եւ Քերականութեան Հայերէն-Անգլիերէն լեզուի Հրատարակութիւն Պ. Պալեկ Կրասն. Գիւն 50 դրոշ:

— Հանդէս Անտրեպ, թիւ 2-3 բաժանորդագրութիւն՝ 30 ֆր. հասցե՝

VII/2 Mèchitharistengasse 4 Vienne (Autriche)

— Հայ Սկաուտ, թիւ 13 Գիւն 5 դրոշ: Հասցե՝ Horassandjian Han, 26, Sirkedji, Constantinople.

— Դարման. գիւն 12,5 դրոշ. Հասցե՝ 103-113 Grand rue de Pera, Cons|ple.

Կ Ա Ր Ե Ի ՈՐ

Ամէն անոնք որ մեզ ներկայացնեն 5 բաժանորդ, իրաւունք պիտի ունենան 1 սարի «Պասրաս» ստանալու:

Խ Ա Ղ Ե Ր Ը

Խաղ մը որ ուշադրութիւն
կը պահանջէ.

Այս խաղը կը պահանջէ բացար-
ձակ ուշադրութիւն մը ու մեծ համա-
կարգութիւն մը լսելիքին ու մկանա-
յին շարժումի միջև:

Խումբը երկու մասի կը բաժնուի,
որոնք կը շարունակ մի շարք զուգա-
հեռաբար դէմ գիւտաց 1 1/2 մէթր մի-
ջոցով: Շարքերէն մին կը կոչուի
«գիր» խակ միւսը «դեմ»:

Խմբագիտը կը կանգնի երկու շար-
քերուն միջև ու օգը կը նետէ պղնձ-
եայ դրամ մը ու անոր ինկած ձեւին
համեմատ կը պօռայ գիր կամ դէմք:

Այսպէս անուանակոչուած շարքը
անմիջապէս կ'սկսի փոխելի զէպի 10
մէթր հեռաւորութեան մը վրայ գըծ-
ուած վայր մը՝ եթէ խաղը բացօդեայ
տեղ մը կը խաղացուի, իսկ զէպի
պատը՝ եթէ սենեակի մը մէջ կը խա-
ղացուի: Եւրոպայի սկառաւ որ
թշնամիին կողմէ կը բռնուի որոշուած
սահմանը հասնելէն առաջ, պարտաւոր
կ'ըլլայ իր շարքը փոխելու և կ'անց-
նի թշնամիին կողմը:

Յաղթական շարքը ան է որ խա-
ղին վերջաւորութեան ժամանակ ա-
մենաշատ սկառաւը կը հաշուէ իր մէջ:

ՍՎԱՌՏԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔ

Վիրաւորեացիներու Փոխադրութիւն
(Անճրածեշտ գիտելիքներ բանալու-
ներու ժամանակ պատահական
դէպքերու համար.)

Եթէ ուշ կերպով վիրաւորեացի մը օսկա-
ւին պահած է իր գիտակցութիւնը, սկառաւնե-
րը կրնան զինք փոխադրել ձեռներու վրայ:

Իսկ այնպիսի անկասկած պարագաներու մի-
ջոցին ուր վիրաւորեացի մը, մտած վիճակի
մը մէջ անկարող է շարժելու, սկառաւ մը պար-
տաւոր է փոխադրել զինք հետեւեացի միջոցնե-
րով:

Եթէ դէպքը կը բոլորակ վիրաւորեացիին
մտածելի անդամներէն բռնուիչը, եւ եթէ
խնամող սկառաւը ուժեղ է, պարտաւոր է ան-
միջապէս վիրաւորեացի երեսի վրայ պառկե-

Յետոյ շատ զանազօրէն վեր բարձրանայ, վի-
րաւորեացիին մտածելի անբողջ ծանրութիւնը
իր վրայ կրելով: Եթէ կուզուի ձախ բազուկը
ագստ քողոյ, այն ասէն սկառաւը պարտաւոր
է ոչ բազուկը վիրաւորեացիին սրունքներէն
անցնել. ու նոյն այդ բազուկին ձեռներով
զոնին աչ դասակարգ բռնել (Տես պատկեր 2):

Եթէ օգնութեան հասնող սկառաւը բաւա-
րար ուժը չունի վիրաւորեացի իր ուսերուն
վրայ կրելու, կարող է զայն փոխադրել
ողորկ գետնի մը վրայ ֆաշելով: Այս-
պէս, պէտք է վիրաւորեացիին երկու ոտները
չուանով կապել ու անոր հագուստը դէպքի ետ
սանելով գլուխին շակ դնել, թաղիսումներ և
խորտարտարութիւններէ պահպանելու համար:
Անմիջապէս պարտաւոր է նոյն այդ չուանին
ծառով կապել նստել իր վիզը կամ ուսերը ու



Պատկեր թիւ 1 || Պատկեր թիւ 2

գրնել եւ իր գլուխը գոլուշտեամբ անկեցնել
անոր կուրծքին սակ. վիրաւորեացիին աչ բա-
զուկը բռնել ձախ ձեռնով եւ անոր սրունք-
ները գրկել աչ բազուկով (Տես պատկեր 1):



Պատկեր թիւ 3

իր ձեռներուն եւ ոտներուն օգնութեամբ սկսի
զանազօրէն յառաջանայ ու ֆաշել վիրաւոր-
եացիին հոն ուր կարելի է բժշկական
միջոցներով դարմանել զինք (Տես պատկեր 3):

Չ. Ս. Ը. Ս.

ՇՐՋԱՔԵՐԱԿԱՆ
ՄՐՏԱՍՍԱԿԱՆԻ ՄԿԱՆԱԶԻՒՂԵՐՈՒ
6 Ապրիլ 1922-թիւ 8
Կեդրոնական Վարչութիւնն սկառ-
աւը յայտարարել թէ նոր ծրագիր-կա-
նանագիրը 1 Ապրիլ 1922էն սկսեալ
գործադրութեան գրուած է:
Չ. Ս. Ը. Ս.ի ԳԵՆԻՐ. ՎԱՐՉՈՒԹԻՒՆ



Սկառաւին Պատմութիւնը

ՈՒՐՈՒՍԱԿԱՆՆԵՐՈՒ ԴՂԵԱԿԸ

II
ԽՈՐՀՐԴԱՒՈՐ ՆՇԱՆՆԵՐԻ

Գիտերը վրայ հասած՝ Միսրի ու
Կրակեւորի կը հանգստանային իրենց
վրանին տակ, կրակին վերջին կայծե-
րուն աղօս լոյսին դիմաց:

Գիտերային աղօթքէն վերջ, իրենց
պարկերուն վրայ հանգչած՝ վրանին
բացուածքէն կը դիտէին երկնային կա-
մարին վրայ աստղերու պարք...:

Ու մինչ Կրակեւորի կ'սկսէ մեա-
լի, յանկարծական յեռոգութիւն մը
եկաւ խանգարել Միսրիի բունը:

— Օ՛հ... դանակ գետակին մօտ
բողուցի... վաղը... տաս ո՛ւտ է...:

Ու անտես, դուրս սպրդեցաւ վը-
րանէն, վերադառնալու ուսերուն վրայ՝
խոտոր ֆայլերով. խոտերուն վրային
սանելով. ու ծառերու կոնքերու մե-
ջէն պատկերով հասաւ գետակը ուր
մոռուած դանակը գտնելով սկառ-
աւը զարկաւ վերադառնալով դե-
պի վրանը:

Յանկարծ սարսափը պատեց իր հո-
գին, իր դիմաց, երկու եղբայրներու
միջեւ, Համապարկեան զոտակը կանգ-
նած էր իր ետէ սեւ աստղակներով
խաւար երկնին վրայ: Ու հոն, այդ
մտայն պատերուն վրայ լուսաւոր կէտ
մը փայլեցաւ:

Միսրի իր աչքերը փակեց, ու կրկին դի-
տեց զոտակը. այս անգամ ոչինչ էր ելեցաւ:

— Արդեօք... պատահամա՞ք... Ուր-
ուականները... պահ, աչքիս երեւ-
ցած պէտք է ըլլայ:

Ու կրկին շարունակեց ֆայլերը.
սակայն չափազանց մահաանջուած՝ միտ
կը դիտէր հին կեռիքները: Յանկարծ
լոյսը երեւցաւ, կրկին տոյգ ու մարե-
ցաւ կամարային նպաստահան մը գծելով:

Սկառաւը կրկին սարսափեցաւ:

— Այս անգամ աչքի տեսիլներ չեն,
մտնաց, բայց հետաքրքրական է այս
ուրուականը իր...:

Ժամանակ մը վերջ, լուսաւոր կէտը
երեւցաւ ու անհետացաւ այս անգամ
քիչ մ'աւելի վար. ու կրկին փայլեցաւ
կարծես թէ դէպի պարիսպին հիմերը
իջնել կ'ուզէ:

— Ահա ուրուականը որ կ'իջնէ,
մտնաց Միսրի, պէտք է...:

Ու սահմակած՝ սպասեց մինչեւ որ հե-
ռաւոր փայլուն աստղերէն զատ ոչինչ
կ'երեւէր աչքերուն առջեւ. եւ վերա-
կուն իր ուսերուն վրայ՝ հասաւ իրենց
բանակած տեղը ու վրանէն ներս մտաւ:

Կրակեւորի կը բնանար միտ ու Միս-
րի, յանկարծ արթնաց զինք:

— Հէ, Կրակեւորի, հէ, կը բնա-
նա՞ս սակաւին...:

— Ի՞նչ կայ որ... դեռ ժամը վեցն է:

— Ո՛չ, բայց գիտե՞ս որ տեսայ...:

— Ձո՞վ...:

— Ո՛հ... Ու... ու... սակաւը...:

— Ի՞նչ կասակ... քո՞ղ տու ուր-
ուականներդ մէկ կողմ... յիտուն եւ
երեւ ֆիլոսոֆիք՝ վերջ... անտեսելի է...:

Ու Միսրի, առանց բառ մ'արտա-
սանելու տարիտեցաւ բնանալ:
(Թարգմ. Ֆրանսերէնէ) — Շարունակ...:

ԺՊԻՏԻ ՄՐՑՈՒՄ

ԿՏՐՈՆ ԹԻԻ 1

Մ. Խ.— Թիւ 2 կտրոնը պիտի հը-
րատարակուի յաջորդ թիւով:

ՄԵՐ ՄՐՑՈՒՄԸ

ՍԿԱՌԻՏԸ ՉՈՒԱՐԹ Է

ԺՊԻՏԻ ՄՐՑՈՒՄ

Այս մրցման մասնակցիլ փա-
փաքող ամէն սկսուած պարտաւոր
է ամենատուշը մինչև Յունիս մէկ,
Խմբագրութեանս զրկել իր լու-
սանկարը ՉՈՒԱՐԹ ու ԽՆԻՌՈՒՄԵ-
ՐԷՍ, ներփակելով նաեւ մրցումի
կտրոնները թիւ 1 ու 2:

Մասնակցող ամէն սկսուած
լուսանկարները պիտի հրատարակ-
ուին թերթիս մէջ ու

Չուարքութեան ու Ժպիտի

Ա. մրցանակը շահողը պիտի ըս-
տանայ Ինֆնահոս գրիչ մը:

Բ. Հանգիստացողը՝ Չուարքութե-
անը խորհրդանշող արձանիկ մը:

Գ. Ը իրաւունք պիտի ունենայ մեկ
սարուան «Պաստաս»ի բաժանոր-
դագրութեան:

Իսկ մնացեալները հաճոյքը պի-
տի ունենան իրենց դէմքը տես-
նելու «Պատրաստ»ի առաջին երե-
սին վրայ:

Այս մրցման կրնան մասնակցիլ
նոյնպէս ոչ-սկսուածներ ինչպէս
նաև իգական սեռը:

ՎԱՀՐԱՄ ԳՊՐԶԼԵԱՆ

Բասաժ Գուլումնեան քիւ 38

(Ֆրանկաց թաղ)



Կը պատրաստէ նուրբ և յատկ փո-
րազրութիւններ, վաճառականական
կնիքներ, քլիշէներ, անսէնեաներ, մո-
նոկրամներ և այլն:

Կը պատրաստէ ամէն կերպ ոսկեղէն և
արծաթեղէն զործեր, նուրբ և ճաշա-
կաւոր:

Ապապրանքներ՝ Խնամեա՛լ
Գիները՝ խիստ աժա՛ն

ՖՈՒԹՊՈԼԸ ՄԵՐ ՄԷՋ

Մասնաճիւղերու Գործունեութիւն
Գարաքաշ.— Զատիկի Երեքշաբթի
օր, Գարաքաշի «Բելօրս»-ի դաշտին
վրայ տեղի ունեցաւ Ֆութպօլի մեր-
ցում մը տեղւոյն վարդանեան և Իզ-
միրի «Արարա Ա.» խումբերուն միջև:

Երկու կողմերն ալ քետ 1ի դիւ 1
կօրով հաւասար հանդիսացան, այսու-
հանգերձ կարգապահութեան պակասը
զգալի է մեր խաղացողներուն մէջ:

— Անցեալ կիրակի, նոյն վարդան-
եան խումբը Պուրնովայի մէջ մրցե-
ցաւ տեղւոյն խառն խումբին հետ և
յաղթական հանդիսացաւ Օի դիւ 2 կօրով:

ՊՈԼՍԱՀԱՅ ՄԱՐԶԱՆԵՍԱՐԸ

Y. M. C. A.ի նախաձեռնութեամբ
1922 Յունիս 2—4 Բերայի Mac-Mahon
մարզարանին մէջ տեղի պիտի ունե-
նան միջազգային մարզական ակադեմի-
անութեան մրցումներ: Ծանօթ բոլոր
խաղերը պիտի ըլլան բացի 3000
մէթր վազքէ, կեցած բարձրութիւն և
երկայնութիւն ցատքէլէ:

Այս առթիւ Հ. Մ. Ը. Մ. ը տեն-
դոտ գործունէութեան սկսած է կա-
րող մարզիկներով ներկայանալու հա-
մար այս միջազգային մրցումներուն:
Հ. Մ. Ը. Մ. ի արտասահմանի մաս-
նաճիւղերն ալ պիտի կարենան մաս-
նակցիլ ու իրենց փափաքած թիւով
մարզիկ զրկել Կ. Պոլիս:

ՖՈՒԹՊՈԼԻ ՀԱՅԿԱԿԱՆ

ՅԱՂԹԱՆԱԿ ՄԸ ԲԱՐԻՉԻ ՄԷՋ
Բարիզ.— Անցեալ կիրակի, 9 Ապ-
րիլ Բարիզի մէջ տեղի ունեցաւ Ֆութ-
պօլի մեծ մրցում մը Հ. Մ. Ը. Մ ի
տեղւոյն մասնաճիւղին և Յունական
պատկառելի խումբին միջև:

Երկուսն խառն բազմութիւն մը ե-
կած էր զիտելու առաջին անգամ այս
երկու խումբերուն հանդիպումը որ
երկար ժամանակէ ի վեր կ'սպասուէր
անհամբերութեամբ:

Հայկական խումբը կատաղի մա-
քառումներէ վերջ կրցաւ իր ազգին
պատիւը բարձր պահել ու Օի դիւ 2
կօրով յաղթական հանդիսացաւ ի մեծ
խանդավառութիւն տեղւոյն հայ հա-
սարակութեան:

— ԿՕՇԿԱԿԱՐԱՏՈՒՆ —

«ԱՐԴՈՒՋԱՐԳ»

ԱԼԷՔՍ ՍԹԻԼԻԱՆՕԲՈՒԼՈՍԻ

Քէնուրի Մախալա Թիւ 79

(Յունական Հիւանդանոցի Տիշո գէմի փողոցը)

Էրիկ մարդերու, կիներու և
փոքրերու համար

Ա ն մ ր ց ե լ ի Գ ն ե ր ո Վ

Անգամ մը այցելելը բաւական է:

ՉԻԱՐՇԱԻՆԵՐԸ

Այս տարուան ձիարշաւները ամէն
տեսակէտով զլեցին նախորդ տարուան
մրցումները: Բայց Հայոց համար ու-
չինչ ունեցաւ իբր, պատուարեւ ար-
դիւնք:

Մինչ առջև տարիներու մէջ ունե-
ցանք Պաշտօնականներ որ յաջորդաբար
միշտ կը խլէին առաջնութեան պսա-
կը, այս տարի ոչ մէկ հայ չը համար-
ձակեցաւ մասնակցիլ այս մրցումնե-
րուն որոնց հանդէպ կարծես այնքան
տաք վերաբերում մը ցոյց չի տար:
Հայ մարզիկն ու Հայ ժողովուրդը,
մինչ Եւրոպայի մէջ այնքան խանդա-
վառութիւն յառաջ կը բերէ օրըստօրէ:

Ներկայ հազարաւոր բազմութեան
մէջ կարելի էր տեսնել փոխ-ժողովակալ
Ռոպիէ, Զորավար Վրախօբուշու, Հել-
լենական վարչութեան Ընդհ. Բար-
տուղար Պր. Կուկարաֆիս, Անգլիայ,
Իտալիոյ, Ֆրանսայի և Պելճիզայի
տեղւոյս հիւպատոսները, Յունաց Գեր.
Մետրապոլիտը և բազմաթիւ օտար
բարձրաստիճան սպաներ:

Յունական զինուորական՝ ու Անգլ.
Այրըն Տիւիզ զրահաւորին նուագա-
խումբերը անընդհատ կը նուագէին ար-
շաւներու միջնարարներու ժամանակ:

ԱՐԴԻԻՆՔՆԵՐԸ

Առաջին արշաւ.— Փորձի մրցա-
նակ.— Լ. Օ. 50— Արևաւթօղլուի
ձին՝ «Աֆրիթ»:

Երկրորդ արշաւ.— Գասապայի Եր-
կաթուղիի պարգևը.— Լ. Օ. 200—
սպայ Չուֆասի ձին՝ «Թաֆիս»:

Երրորդ արշաւ.— Իզմիրի Գարափի
Ընկերութեան պարգև.— Լ. Օ. 200—
Պր. Զինցիլի և Զաֆրիսիսի ձին՝
«Օթէլի»:

Չորրորդ արշաւ.— Ընդհ. Հրամա-
նատարին մրցանակը.— Լ. Օ. 500—
Կոստ Գարսո Սեկնիի ձին՝ «Ռոյըլ Ֆրըշ»:

Հինգերորդ արշաւ.— Մովսիսօրջի
Ընկերութեան պարգև.— Լ. Օ. 200—
ձեւաշի Արապ Աղա Պեյի ձին՝ «Մա-
ժուր»:

Վեցերորդ արշաւ.— Ձիարշաւի ա-
կումբներու մրցանակը.— Լ. Օ. 300—
Գափանձօղլու Զաւե Բեշաս Պեյի ձին՝
«Մանպրոֆ»:

Եօթներորդ արշաւ.— Այտընի Եր-
կաթուղիի պարգևը.— Լ. Օ. 200—
Գափանձօղլու Զաւե Բեշաս Պեյի ձին՝
«Մանպրոֆ»:

Ութերորդ արշաւ.— Միսիթարանքի
պարգև.— Լ. Օ. 100, Զինցիլիի ձին՝
«Բօֆեր»:

Տպ. Քէշիշեան — Իզմիր